

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեղդեզիայի և հողային պետական տեսչության 2013 թվականի կատարված աշխատանքների վերաբերյալ

Տեսչության կողմից հաշվետու տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության ոլորտ

Համաձայն «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համաձայնեցված և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի ապրիլի 23-ի N 121-Լ հրամանով հաստատված ՀՀ մարզերում տեսչական ստուգումների անցկացման ժամանակացույցի, սահմանված ժամկետներում տեսչության կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի և Արարատի մարզերում, մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչությունների կողմից մարզերի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման և օգտագործման տրամադրման, օրենքով իրենց տրված լիազորությունների շրջանակներում իրականացված վերահսկողական աշխատանքների նկատմամբ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ստուգումներ են իրականացվել Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման, հողային հաշվեկշռի կազմման, պետական սեփականություն հանդիսացող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, ինչպես նաև գոյություն ունեցող պետական և ազգային գեղդեզիական ցանցի կետերի և վարչատարածքային միավորի սահմանանիշերի առկայության, պահպանման իրականացված գործունեության նկատմամբ:

Մարզպետարանների կողմից իրականացված գործառնություններում հայտնաբերվել են որոշ թերություններ, մասնավորապես որոշ մարզերի հողաշինության և հողօգտագործման բաժինների կողմից 2011, 2012, 2013թ.թ. ընթացքում համայնքներում հողերի օգտագործման և պահպանման ոլորտում իրականացված ստուգումների ժամանակ արձանագրել են ՀՀ օրենսդրության պահանջների վարչական պատասխանատվության հանգեցնող խախտումներ, որոնք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 26.09.2008թ. «Հողերի օգտագործման և պահպանման խախտումների ակտի, ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկանքի, ծանուցագրի, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումների հաշվառման մատյանների ձևերը, հողային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ ստուգումների հաշվառման մատյանի

լրացման մեթոդական ցուցումը հաստատելու մասին» հ.302-Ն հրամանով հաստատված և ՀՀ արդարադատության նախարարությունում 15.11.2008թ. գրանցված հողերի օգտագործման և պահպանման խախտումների սահմանված ձևի ակտերի փոխարեն արձանագրվել են նույն հրամանով հաստատված ստուգումների արդյունքների վերաբերյալ սահմանված ձևի տեղեկանքներում, և խախտում թույլ տված անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ համապատասխան որոշումներ չեն կայացվել: Մինչդեռ համաձայն վերոհիշյալ հրամանի պահանջների, ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկանքները լրացվում են այն դեպքում, երբ հայտնաբերվում են վարչական պատասխանատվություն չհանգեցնող խախտումներ:

Միաժամանակ վերոհիշյալ հրամանով հաստատված մարզպետների կողմից իրականացված հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումների հաշվառման մատյանում գրանցվել են վարչական պատասխանատվություն առաջացնող խախտումներ, որոնց համար խախտում թույլ տված համայնքների ղեկավարներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մարզպետի կողմից որոշումներ չեն կայացվել, այլ ընդամենը արվել են գրառումներ խախտումները վերացնելու վերաբերյալ մարզպետի կողմից արված բանավոր հայտարարությունների կամ ցուցումների մասին:

Համաձայն վերոհիշյալ հրահանգով հաստատված հողային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ ստուգումների հաշվառման մատյանի լրացման մեթոդական ցուցումի, տեղեկանքներում արձանագրված վարչական պատասխանատվության չհանգեցնող խախտումները վերացնելու վերաբերյալ գրառումներ ստուգումների հաշվառման մատյանների 11-սյունակում բացակայում են:

Նշված խնդիրները բազմիցս քննարկվել են մարզպետարանների համապատասխան մասնագետների հետ, ներկայացվել է կոմիտեի նախագահի հրամանով հաստատված պահանջները և դրանց չկատարման հետևանքները, սակայն խնդիրը առ այսօր լուծում չի ստացել, որի վերաբերյալ տեսչության կողմից, համապատասխան գրություններով տեղեկացվել է իրավական բարձրագույն հսկողություն իրականացնող մարմինն՝ տարածքային կառավարման նախարարությանը: Վերը նշված թերությունների հիման վրա, տեսչության պետի կողմից միջնորդություններ է ներկայացվել 3 մարզպետների, իրենց պարտականություններում թերացած ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին- մարզային հողային պետական տեսչությունների պետերին և պաշտոնատար անձանց կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների համաձայն, տեսչության մասնագետները տեղական ինքնակառավարման մարմիններում առկա փաստաթղթերի համադրման և հողամասերի տեղազննության նպատակով ընտրանքային կարգով ուսումնասիրություններ են իրականացրել մարզային հողային պետական տեսչությունների կողմից ստուգված 267-ից 56 համայնքներում, որը կազմում է մոտ 20%: Ուսումնասիրությունների արդյունքում

արձանագրվել են ՀՀ օրենսդրության վարչական պատասխանատվության ենթակա տարբեր բնույթների խախտումներ: Ղեկավարվելով «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 19.03.2013թ. «ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչությանը վարչական տույժ նշանակելու իրավասություն վերապահելու մասին» N 88-Լ հրամանը, գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի թվով 7 որոշումներով միջնորդություններ են ներկայացվել մարզպետներին՝ խախտում թույլ տված 42 համայնքների ղեկավարներին ընդհանուր 9.050.000 հազ. դրամ գումարի չափով վարչական տույժի ենթարկելու մասին: 01.12.2013թ. դրությամբ փաստացի մուտքագրված գումարի չափը հատուկ հաշվեհամարին կազմում է 3.195.000 հազ. դրամ:

ՀՀ մարզերի 4 համայնքներում հայտնաբերված ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ընդերքի շահագործման փաստի վերաբերյալ համապատասխան գրություններ են ներկայացվել ՀՀ կառավարության 15.05.2008թ. N653-Ն որոշման համաձայն լիազոր մարմիններին՝ ՀՀ բնապահպանության և էներգետիկայի ու բնական պաշարների կառավարման նախարարություններին:

Տեսչության պետի որոշումների համաձայն 9 համայնքների ղեկավարների գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով հաղորդագրություն է ներկայացվել իրավասու մարմիններին՝ մարզային դատախազություններին:

Արձանագրվել են նաև վարչական պատասխանատվության չհանգեցնող խախտումներ, որոնք վերացնելու համար միջնորդություններ են ներկայացվել ՀՀ մարզպետներին, համայնքների ղեկավարներին պարտադիր կատարման ցուցումներ և ժամկետներ տալու մասին:

Տեսչության մասնագետները մասնակցել են սույն թվականի հոկտեմբերի 3-5-ը Ջերմուկ քաղաքում տեղի ունցած գյուղական համայնքների 3-րդ համաժողովի ընթացքում կազմակերպված թեմատիկ քննարկումներին և հանդես եկել « ՀՀ գյուղական համայնքներում հողային օրենսդրության պահանջներին համապատասխան վերահսկողության իրականացման ընթացքում առկա խնդիրների վերհանումը և դրանց լուծման խնդիրները» զեկույցով:

Ջեկույցում ներկայացվել են 2012-2013 թվականների ընթացքում գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից ՀՀ մարզերում և համայնքներում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև դրանց արդյունքում հողերի օգտագործման և պահպանման ոլորտում հայտնաբերված խախտումները և թերությունները: Նշվել է, որ ի հայտ եկած որոշ խնդիրներ կապված են գործող օրենքներում և օրենսդրական ակտերում առկա հակասությունների, բացթողումների, տարընթերցումների և

այլ թերությունների հետ, որոնց կանոնակարգման համար տեսչությունը գտնում է, որ անհրաժեշտություն է առաջացել գործող օրենքներում և օրենսդրական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնց վերաբերյալ նյութերը նախապատրաստվում են և կներկայացվեն 2014թ. առաջին եռամսյակում:

Ըստ մարզերի տեսչական ստուգումների արդյունքները հետևյալն է.

ՀՀ Արմավիրի մարզ– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 9 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 1.300.000 հազ. դրամի չափով վարչական, տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 27.06.2013թ. հ.11 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Համաձայն մարզպետի 01.10.2013թ. N01/11/3640-13 գրության, կայացվել են որոշումներ 3 համայնքների ղեկավարներին ընդհանուր 450000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Նույն գրությամբ հայտնվել է, որ մնացած 6 համայնքների ղեկավարներին արձանագրված խախտումները վերացնելու համար տրվել են ցուցումներ և ժամկետ:

Մարզպետի կողմից կայացված վերոգրյալ որոշումները տեսչությանը չեն տրամադրվել:

ՀՀ Կոտայքի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 10 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 2.750.000 հազ. դրամի չափով վարչական, տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 04.09.2013թ. հ.12 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Համաձայն մարզպետի 21.10.2013թ. N01/19/4060-13 գրության, կայացվել են որոշումներ 5 համայնքների (Բյուրեղավան, Գառնի, Նոր Գեղի, Մրգաշեն և Մեղրաձոր) ղեկավարներին ընդհանուր 850.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Նույն գրությամբ հայտնվել է, որ 4 համայնքների (Գողթ, Մայակովսկի, Եղվարդ և Արտավազ) ղեկավարներին արձանագրված խախտումները վերացնելու համար տրվել են ցուցումներ:

ՀՀ Վայոց Ձորի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 7 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 650.000_հազ. դրամի չափով վարչական տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 27.09.2013թ. հ.15 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Համաձայն մարզպետի 10.09.2013թ. N01/12.1/4791-13 գրության 2 (Ագարակաձոր և Գնիշիկ) համայնքների ղեկավարների նկատմամբ կկիրառվեն վարչական տույժեր:

Մարզպետի 14.11.2013թ. N01/11/6137-13 մեկ այլ գրության համաձայն, կայացվել է մեկ որոշում՝ Գնիշիկ համայնքի ղեկավարին 150.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Նույն գրությամբ հայտնվել է, որ մնացած 6 համայնքների ղեկավարներին արձանագրված խախտումների համար վարչական պատասխանատվության չեն ենթարկվել՝ հողամասերի նկատմամբ իրավունքը գրանցված լինելու պատճառով:

Ագարակաձոր և Քարագլուխ համայնքների ղեկավարների գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով տեսչության կողմից հաղորդագրություն է ներկայացվել ՀՀ Վայոց Ձորի մարզի դատախազություն:

ՀՀ Սյունիքի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 800.000 հազ. դրամի չափով վարչական տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 04.09.2013թ. հ.13 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Մարզպետի կողմից խախտումներ թույլ տված համայնքների ղեկավարներին վարչական տույժի ենթարկելու մասին որոշումներ 02.12.2013թ. դրությամբ տեսչությանը չեն տրամադրվել:

ՀՀ Շիրակի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 8 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 750.000 հազ. դրամի չափով վարչական տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 04.09.2013թ. հ.14 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Համաձայն մարզպետի տեղակալի 24.09.2013թ. N02.2/4577-13 գրության, կայացվել են որոշումներ 2 համայնքների ղեկավարներին ընդհանուր 300000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: Մնացած համայնքների ղեկավարներին, որպես նոր ընտրված, տրվել են ցուցումներ և ժամկետ արձանագրված խախտումները վերացնելու համար:

ՀՀ Լոռու մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 1.450.000 հազ. դրամի չափով վարչական տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 04.11.2013թ. հ.16 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Համաձայն մարզպետի 26.11.2013թ. N 101/111.1/6044-13 գրության, կայացվել են որոշումներ բոլոր 6 համայնքների (Գուգարք, Դարպաս, Օձուն, Կուրթան, Ջրաշեն և Սպիտակ) ղեկավարներին ընդհանուր 1.450.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Տեսչության պետի վերոհիշյալ որոշման համաձայն Դարպաս, Օձուն, Ջրաշեն և Սպիտակ համայնքների ղեկավարների գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով տեսչության կողմից հաղորդագրություն է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի դատախազություն:

ՀՀ Արագածոտնի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Հողային օրենսդրության պահանջների խախտումներ կատարած համայնքների ղեկավարներին 1.350.000 հազ. դրամի չափով վարչական տույժի ենթարկելու միջնորդության մասին տեսչության պետի 25.11.2013թ. հ.17 որոշումը ներկայացվել է մարզպետին:

Մարզպետի կողմից խախտումներ թույլ տված համայնքների ղեկավարներին վարչական տույժի ենթարկելու մասին որոշումներ 02.12.2013թ. դրությամբ տեսչությանը չեն տրամադրվել:

Տեսչության պետի վերոհիշյալ որոշման համաձայն Կոշ, Ագարակ և Ուջան համայնքների ղեկավարների գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով հաղորդագրություն է ներկայացվել ՀՀ Արագածոտնի մարզի դատախազություն:

ՀՀ Գեղարքունիքի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 5 համայնքներում:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված հողային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմված ակտը 08.11.2013թ. ներկայացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին ստորագրության և մինչ օրս պատասխան չի ներկայացվել:

ՀՀ Տավուշի մարզ- Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված հողային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմված ակտը 13.11.2013թ. ներկայացվել է ՀՀ Տավուշի մարզպետին ստորագրության և մինչ օրս պատասխան չի ներկայացվել:

ՀՀ Արարատի մարզ- Ստուգումները գտնվում են ընթացքի մեջ:

Ըստ անհրաժեշտության ստուգումներ

Տեսչության կողմից ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել Երևանի քաղաքապետարանում՝ համայնքում հողօգտագործման բնագավառում պետության կողմից քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են պետական սեփականություն հանդիսացող հողերի ընթացիկ հաշվառման, հողային հաշվեկշռի կազմման, համայնքի վարչական սահմաններում գտնվող և համայնքին պահպանության հանձնված գեոդեզիական կետերի և սահմանանիշերի, համայնքի վարչական սահմանների սահմանանիշերի պահպանման և ամրացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումներ, որոնց վերաբերյալ համապատասխան նյութերը կազմվում են իրավական հսկողության բարձրագույն մարմնին՝ տարածքային կառավարման նախարարությանը ներկայացնելու համար:

Գեոդեզիայի և քարտեզագրության նկատմամբ վերահսկողության ոլորտ

Ղեկավարվելով «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 23.04.2013 թվականի ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ փոխվարչապետ Ա.Գևորգյանի հետ համաձայնեցված և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 23.04.2013թ. N 121-Լ հրամանով հաստատված՝ 2012-2013թթ. ՀՀ մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցը, գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից տեսչական ստուգումներ են իրականացվել բոլոր 10՝ Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի և Արարատի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունների կողմից մարզերի համայնքների, վարչական տարածքներում գոյություն ունեցող պետական և ազգային գեոդեզիական ցանցի կետերի, վարչատարածքային միավորների սահմանանիշերի առկայության, պահպանման և հաշվառման նկատմամբ իրականացված վերահսկողական աշխատանքների նկատմամբ:

Ստուգումների արդյունքում գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից խախտումներ չեն հայտնաբերվել, որոնց վերաբերյալ կազմված տեղեկանքները ներկայացվել են համապատասխան մարզպետներին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի հունվարի 22-ի թիվ 17-Լ հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն տեսչության կողմից կոմիտեի աշխատակազմի բոլոր 10՝ Արմավիրի, Կոտայքի,

Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի և Արարատի մարզային և Երևանի տարածքային ստորամասնումներում իրականացվել են հերթապահ կադաստրային քարտեզների վարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ: Արարատի մարզային և Երևանի տարածքային ստորաբաժանումներում իրականացված ստուգման արդյունքները գտնվում են քննարկման փուլում, մնացած 9 մարզային ստորաբաժանումներում իրականացրած ստուգումների ժամանակ հայտնաբերվել են մի շարք թերություններ, արդյունքում կազմված տեղեկանքները ներկայացվել են մարզային ստորաբաժանումների ղեկավարների քննարկմանը: Բոլոր ստորաբաժանումների ղեկավարները գրություններով հայտնել են, որ տեղեկանքներում արձանագրված թերությունները իրենց կողմից ընդունվել են, արձանագրված թերությունները ամբողջությամբ վերացվել են և բոլոր աշխատակիցների ուշադրությունն է հրավիրվել դրանք հետագայում բացառելու համար: Նշված թերությունների վերաբերյալ տեղեկանքները և ստորաբաժանումների ղեկավարների կողմից թերությունները վերացնելու մասին գրությունները հրամանի պահանջների համաձայն գեկուցագրերով ներկայացվել են կոմիտեի նախագահին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի հունվարի 21-ի թիվ 14-Լ հրամանի պահանջների համաձայն տեսչության կողմից «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ում իրականացվել են տեսչական ստուգումներ, արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ:

Ստուգումների արդյունքում գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի կողմից վարչական տույժ նշանակելու մասին 25.07.2013թ. N12 որոշմամբ խախտում կատարած պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր, իսկ արձանագրված վարչական պատասխանատվության չհանգեցնող խախտումների համար «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի տնօրենին տրվել է պարտադիր կատարման ցուցում՝ դրանք եռամսյա ժամկետում վերացնելու համար:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 21 հունվարի 2013թ. թիվ 15-Լ հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն տեսչության կողմից տեսչական ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ մշակույթի նախարարության համակարգում գտնվող «Հուշարձանների հետազոտման գիտաարտադրական կենտրոն» և «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության» ՊՈԱԿ-ներում, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետական վարչությունում, Երևանի «Երևան ջուր» ՓԲԸ-ում և «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանումում առկա քարտեզագրագեոդեզիական նյութերի ու տվյալների հաշվառման, պահպանման, օգտագործման և տրամադրման նկատմամբ, որի արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են համապատասխան տեղեկանքներ և ներկայացվել են գերատեսչությունների ղեկավարներին, դրանք վերացնելու և հետագայում բացառելու համար:

2013 թ. տեսչության մասնագետները ընդգրկվել են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 21 դեկտեմբերի 2012թ. թիվ 383-Ա հրամանի համաձայն ստեղծված աշխատանքային խմբում և իրականացրել են նույն հրամանով սահմանված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Արարատի մարզերի ընդհանուր թվով 443 համայնքների անձնագրերի և կադաստրային քարտեզների կազմման, ինչպես նաև թվով 350 համայնքներին գեոդեզիական ցանցի և համայնքային հանգուցային, շրջադարձային կետերի անձնագրերի հանձնման աշխատանքներին:

Տեսչության պետը ա/թ-ին գործուղվել է Ռուսաստանի, Լիտվիայի և Ուկրաինայի հանրապետություններ, նույն ոլորտի համապատասխան պաշտոնատար անձանց հետ փորձի փոխանակման համար: Դրա արդյունքում տեսչությունում հյուրընկալվել են փոխադարձ այցով Լիտվայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության հողային տեսչության պատվիրակության անդամները: Տեղի ունեցած քննարկումների ժամանակ կարևորվել է հանրապետությունների հողային տեսչությունների միջև համագործակցությունը և փորձի փոխանակությունը հողերի օգտագործման և պահպանման ինչպես նաև գեոդեզիայի և քարտեզագրության վերահսկողական աշխատանքներում: